
ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ





2016

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ





Հարգելի՛ համաքաղաքացիներ,

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:


Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:



Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Ավան վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,

հերթական տարին ենք ամփոփում միասին ու կրկին շոշափելի ձեռքբերումներով: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ Ավանում տարիներ շարունակ որդեգրված համատեղ աշխատանքի սկզբունքն արդարացված է ու արդյունավետ: Մեր աշխատակազմն, անշուշտ, հետևողականորեն շարունակում է բոլոր այն ծրագրերի իրականացումը, որոնք տարիների ընթացքում դարձել են կատարված աշխատանք ու մեր Ավանին բերել են մաքուր, հարմարավետ, կոկիկ ու կանաչապատ վարչական շրջանի արդարացված համբավ: Եվ այդ ամենում անչափ կարևոր ու գնահատելի է ձեզանից յուրաքանչյուրի անձնական ներդրումը, քանզի առանց ձեր հոգատար վերաբերմունքի ու սրտացավության, հաստա՛տ, հնարավոր չէր լինի պահպանել արվածն ու ձեռնամուխ լինել նորերի ստեղծմանը: Ու համոզված եմ, որ նույն եռանդով և նախանձախնդրությամբ թե՛ 2017-ին և թե՛ հաջորդող բոլոր տարիներին մենք համատեղ ուժերով կշարունակենք բոլոր այն ծրագրերի իրականացումը, որոնք էլ ավելի լավն ու ներկայանալի կդարձնեն մեր սիրելի Ավանը:

Ավան վարչական շրջանի ղեկավար՝
Մանվել Ջավադյան

Բարեկարգ փողոցներ և բակեր

- Կատարվել են 54 000 մ² ընդհանուր մակերեսով փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտապատման աշխատանքներ:
- Վերանորոգվել են 1 400 մ ընդհանուր երկարությամբ եզրաքարեր:ս
- Կառուցվել է 120 մ երկարությամբ հենապատ:









Խնամված կանաչ տարածքներ



- Վերանորոգվել է 947 գծմ ոռոգման համակարգ:
- Տնկվել է 2 200 ծառ, 700 թուփ, 2000 վարդի թուփ, 62 000 վարդակակաչի սոխուկ, 149 205 ծաղկասածիլ:
- Իրականացվել է կանաչ տարածքների և ծառերի ամենօրյա խնամք:












Վարչական շրջանում կանաչ տարածությունները կազմում են 28 հա:

- Ավելացվել են ծաղկային տարածություններ Նարեկացի, Դուրյան, Չարենց թաղամասերում:
- Կառուցվել են նոր պուրակներ և հանգստի գոտիներ:

- Վերանորոգվել են 41 բազմաբնակարան շենքերի 60 շքամուտքերը, աշխատանքներն իրականացվել են բոլոր հարկերում:
- Թվով 60 շենքերի մուտքերի դռները փոխարինվել են նորերով:













- 99 շենքերում նորոգվել են 6 068 քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիքներ,
- 8 շենքում՝ 812 մ² թեք տանիքներ,
- աճառյան թաղամասի հհ. 1, 2, 30, 20գ շենքերում վերանորոգվել է թվով 10 վթարային շքապատշգամբ,
- բնակֆոնդի և բակային տարածքների պահպանման և շահագործման խնդիրներով համագործակցություն է իրականացվել շրջանի տարածքում գործող 8 համատիրությունների հետ: Ամբողջական կամ մասնակի վերանորոգվել է 36 վերելակ:




Ավան վարչական շրջանում բարեկարգվել է 31 բակային տարածք

- 19 հասցեներում կառուցվել են նոր պուրակներ և խաղահրապարակներ, տեղադրվել են 7 խաղային և 8 մարզական համալիրներ:
- Վարչական շրջանի այգիներում, խաղահրապարակներում կատարվել են ներկման, աղբամանների, նստարանների, ցանկապատերի վերանորոգման աշխատանքներ:
- Վարչական շրջանի թվով 12 մինի ֆուտբոլի դաշտերի փայտե ցանկապատերը ներկվել են, և տեղադրվել են դարպասների նոր ցանցեր:
- Տեղադրվել է Համազասպ Բաբաջանյանի արձանը:









- Վերանորոգվել է 1 900 գծմ երկարությամբ ջրագիծ,
- փոխվել է 85 գծմ երկարությամբ կոյուղագիծ,
- հիմնովին փոխվել է 8 շենքերի մալուխային համակարգը,
- վթարային վիճակում գտնվող 18 էլեկտրասյուներ փոխարինվել են նորերով,
- վերանորոգվել է 25 դիտահոր և անձրևատար:











- «Խութ» բարեգործական հիմնադրամի և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համագործակցելով՝ տարաբնույթ աջակցություն է ցուցաբերվել 4 500 շահառուի:

- Ծաղկաձորի «ԼԱՎԱ Աղբյուր» և «Ալիք» ճամբարներում կազմակերպվել է դպրոցահասակ 110 երեխայի ամառային հանգիստը:

- Թվով 40 զինվորների ծնողներ այցելել են ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող իրենց զավակներին:







- «Էրեբունի - Երևան 2798» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում 213 ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

- 540 աշակերտ ստացել է դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ: Վերանորոգվել են մանկապարտեզների խոհանոցներն ու լվացքատները:

- «Խութ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ տարվա ընթացքում սոցիալապես անապահով շուրջ 1 700 ընտանիքների տրվել է պարենային, 595 քաղաքացու՝ ֆինանսական աջակցություն:



- Հիմնովին վերանորոգվել են հհ. 51, 54, 56, 57 մանկապարտեզների սանհանգույցները:
- Թվով 7 մանկապարտեզների համար ձեռք է բերվել խոհանոցային գույք և սառնարան, ինչպես նաև՝ մահճակալ և պահարան: Ձեռք բերված գույքի ընդհանուր քանակը՝ 296:
- Կրթամշակութային ծրագրերի շրջանակում մանկապարտեզները համագործակցել են Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Չինաստանի, Լատվիայի և Ռուսաստանի դեսպանատների հետ:
- Պարբերաբար կազմակերպվել է սննդի վերահսկողություն՝ ծնողների անմիջական մասնակցությամբ:









- Ավանի թիվ 1 գրադարանի ընթերցողների թիվն ավելացել է՝ կազմելով 1600, թարմացվել է գրքային ֆոնդը:
- Գևորգ Բուդաղյանի անվան արվեստի դպրոց հաճախողների թիվն ավելացել է 20%-ով, ներկայումս կազմում է 451 սան:
- Ավանի մշակույթի տուն հաճախողների թիվն ավելացել է 15%-ով, ներկայումս կազմում է 220 սան:
- Պետական, ազգային տոների, ինչպես նաև այլ առիթներով անցկացվել է 285 մշակութային միջոցառում:




















- Ավանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց ՀՈԱԿ-ը հիմնովին վերանորոգվել է:
- Ավանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց հաճախող սաների թիվն աճել է 20%-ով, ներկայումս կազմում է 300 սան:
- Ավանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց հաճախող սաների թիվն աճել է 15%-ով, ներկայումս հաճախում է 357 սան:
- 2016թ. ընթացքում կազմակերպվել է 65 սպորտային միջոցառում:













- Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնությամբ ստացիոնար բուժում է ստացել 124 բնակիչ, հատկացվել է առողջարանային վերականգնողական բուժման 20 ուղեգիր:

- «Խութ» հիմնադրամի աջակցությամբ 200 բնակիչ ենթարկվել է սրտի անվճար բուժհետազոտության:

- «Խութ» հիմնադրամի հետ համատեղ նախաձեռնությամբ «Աստղիկ» ԲԿ-ի մասնագետների կողմից 60 մանկավարժ ենթարկվել է վահանաձև գեղձի անվճար հետազոտությունների:

- Երևանի միջազգային գործընկերության շրջանակում շարունակվում է համագործակցությունը Մոսկվա, Կրասնոդար, Կիև, Խարկով, Ռիգա, Փարիզ, Մարսել և Լիոն քաղաքների վարչական շրջանների հետ:



- Ավան վարչական շրջանը համագործակցում է ՀՀ-ում տարբեր երկրների դեսպանատների հետ՝ Չինաստանի, Գերմանիայի, Լատվիայի, ՌԴ-ի, Ֆրանսիայի, Վրաստանի, Հունաստանի, ԱՄՆ-ի, Իտալիայի:



- Կատարվել են փոխադարձ այցելություններ Լատվիայի Հանրապետության Ռիգա քաղաք, Ուկրաինայի Հանրապետության Խարկով քաղաք, ՌԴ Կրասնոդար քաղաք:

- Ավան վարչական շրջանը համագործակցում է ԼՂՀ Ստեփանակերտ, Մարտունի և Ճարտար քաղաքների հետ:



- Ավան վարչական շրջանի ղեկավար Մանվել Ջավաղյանն ու Ճարտարի քաղաքապետ Արթուր Աղաբեկյանը ստորագրել են աշխատակազմերի համագործակցության 2016-2017 թվականների գործողությունների ծրագիր:



- Կատարվել են փոխադարձ այցելություններ ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար քաղաք, կրթամշակութային հաստատություններ:

- Ավան վարչական շրջանը համագործակցում է նաև ՀՀ Արմավիրի մարզի հետ:

2016

ԱՎԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝

+(374 11) 518-111

avan@yerevan.am



www.yerevan.am